ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2026-3-2-Ա

ք. Երևան 08.04.2026թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2026 թվականի ապրիլի 8-ի նիստում քննարկեց 2025 թվականի հուլիսի 16-ին գործադիր տնօրեն Լիանա Ղալթաղչյանի կողմից ներկայացված՝ «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի (Երևան, 0010, կենտրոն, Մելիք Ադամյան 2/2, AM) «HARVESTING NATURE & BOUNTY» (No20242258) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
Հայտում նշված՝ 30-րդ դասի ապրանքների համար հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ շփոթելու աստիճան նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույն կամ նույնատիպ լինելը սպառողների մոտ շփոթություն առաջացնելու հավանականություն է պարունակում: Տվյալ դեպքում հայտարկված նիշի գրանցումը ենթակա է մերժման որպես ապրանքային նշան վերը նշված դասի ապրանքների համար, քանի որ այն շփոթելու աստիճան նման է Հայաստանի Հանրապետությունում նույնատիպ ապրանքների համար գրանցման հիման վրա պահպանվող ավելի վաղ «BOUNTY» (MARS, INCORPORATED, a Delaware corporation, 6885 Elm Street, McLean, Virginia 22101-3883, U.S.A., N 3672, 14.10.1998) համակցված ապրանքային նշանին: ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538 - Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 122-րդ կետի, 130-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն համակցված ապրանքային նշաններին նման կարող են լինել համակցված ապրանքային նշանները: Տվյալ դեպքում գրանցված ապրանքային նշանի «BOUNTY» բառային տարրն ամբողջությամբ ներառված է հայտարկված ապրանքային նշանի մեջ:

Կոլեգիայի անդամը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության

որոշումն ուժի մեջ թողնելու մասին, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ շփոթելու աստիճան նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույն կամ նույնատիպ լինելը սպառողների մոտ շփոթություն առաջացնելու հավանականություն է պարունակում: Տվյալ դեպքում հայտարկված նիշի գրանցումը ենթակա է մերժման որպես ապրանքային նշան 30-րդ դասի ապրանքների համար, քանի որ այն շփոթելու աստիճան նման է Հայաստանի Հանրապետությունում նույնատիպ ապրանքների համար գրանցման հիման վրա պահպանվող ավելի վաղ «BOUNTY» (MARS, INCORPORATED, a Delaware corporation, 6885 Elm Street, McLean, Virginia 22101-3883, U.S.A., N 3672, 14.10.1998) համակցված ապրանքային նշանին:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ կրկնական փորձաքննության արդյունքում կայացված որոշումը իրավաչափ է:

Բողոքարկողի ներկայացուցիչը կարծում էր, որ հայտարկված ապրանքային նշանը ենթակա է գրանցման:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 70-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Լիանա Ղալթաղչյանի կողմից ներկայացված՝ «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի «HARVESTING NATURE & BOUNTY» (No20242258) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը մերժել և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԱՆՈՒՇԻԿ ԱՎԵՏՅԱՆ